



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/4511/05/24
Նախագահող դատավոր՝ Ս. Հովակիմյան

Վարչական գործ թիվ ՎԴ/4511/05/24
2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ք. ՄԿՈՅԱՆ

2025 թվականի հունվարի 29-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 28.08.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի անհատ ձեռնարկատեր Հակոբ Մադոյանի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ անհատ ձեռնարկատեր Հակոբ Մադոյանը պահանջել է ամբողջությամբ անվավեր ճանաչել Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտը: Միաժամանակ հայցվորը ներկայացրել է միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Տ. Սանթրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 20.06.2024 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.08.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.06.2024 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ հարկային օրենսգրքի 68-րդ գլխով սահմանված կարգը, 342-րդ և 345-րդ հոդվածները, չի կիրառել կամ թերի է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը, 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, նույն հոդվածի 9-րդ մասը, 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 126-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, հաշվի չի առել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Տվյալ դեպքում հարկային մարմինը, պահպանելով ՀՀ հարկային օրենսգրքի 342-րդ և 345-րդ հոդվածներով ամրագրված ստուգման/ուսումնասիրման արդյունքների ամփոփման կարգը, հարկ վճարողին էլեկտրոնային ծանուցման եղանակով տրամադրել է կազմված փաստաթղթերն ու նյութերը, որպիսի պայմաններում թիվ 4184772 ակտն անհատ ձեռնարկատեր Հակոբ Մադոյանի կողմից համարվում է ստացված հենց 11.01.2024 թվականին: Նշվածը հիմք է տալիս փաստելու, որ սույն վարչական ակտն ուժի մեջ է մտել 12.01.2024 թվականին, որպիսի պայմաններում վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից սկսած մինչև 12.03.2024 թվականը՝ երկամսյա ժամկետի պահպանմամբ, անհատ ձեռնարկատեր Հակոբ Մադոյանը թիվ 4184772 ակտը կարող էր բողոքարկել Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով կամ դատարան, ինչը չի արել:

Հայցվորը հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությամբ չի ներկայացրել որևէ ծանրակշիռ փաստարկ, որից ելնելով՝ ստորադաս ատյանները կարող էին բաց թողնված դատավարական ժամկետը համարել հարգելի:

Հատկանշական է այն, որ հարկային մարմնի և հարկ վճարողի շփումը նվազագույնի հասցնելու, վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Կոմիտեն

հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ՝ ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Թիվ ՀՕ-55-Ն օրենքով 04.03.2022 թվականին ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտել 01.07.2022 թվականից: Հետևաբար հայցվորը ողջամտորեն կարող էր և պարտավոր էր տեղյակ լինել ՀՀ հարկային օրենսգրքում տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների մասին, հատկապես, երբ Կոմիտեն պաշտոնական կայքի միջոցով տեղեկացրել է հանրությանն այն մասին, որ 01.10.2022 թվականից հարկային ստուգումներին և ուսումնասիրություններին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի որոշումները հարկ վճարողներին ծանուցվում են էլեկտրոնային եղանակով և համարվում են պատշաճ ծանուցված՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում տեղադրելու օրվանից:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը ոչ միայն իր որոշմամբ եկել է սխալ եզրահանգման, այլև որևէ վերլուծություն չի կատարել վկայակոչված ՀՀ հարկային օրենսգրքի 342-րդ և 345-րդ հոդվածների վերաբերյալ, որոնք ուղղակիորեն սահմանում են ուսումնասիրման արդյունքների ամփոփման կարգը, այլ ընդամենն արձանագրել է, որ հայցվորը տվյալ մասնավոր դեպքում վիճարկվող վարչական ակտին և կից նյութերին հնարավորություն է ունեցել ծանոթանալու և դրանք ստանալու միայն իր դիմումի հիման վրա՝ 18.04.2024 թվականին: Այնուամենայնիվ, հարգելի ճանաչելով հայցվորի ներկայացրած բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը՝ առանց որևէ հիմնավոր պատճառի, Դատարանն ակնհայտորեն անտեսել է օրենսդրական մակարդակով նախատեսված իրավակարգավորումը, ինչն արժեզրկել է օրենսդրի կողմից իրավական որոշակիության ապահովմանն ուղղված նորմատիվ բնույթ կրող իրավական ֆիկցիայի ամրագրումը:

Վարույթ իրականացնող մարմինը ՀՀ հարկային օրենսդրության և իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, այն է՝ պահպանելով և կիրառելով ՀՀ հարկային օրենսգրքի 342-րդ հոդվածով ամրագրված ստուգման արդյունքների ամփոփման կարգը, տնտեսվարող սուբյեկտին է ուղարկել վերջինիս նկատմամբ իրականացվող հարկային ուսումնասիրության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը, սակայն հարկ վճարողը, ըստ էության, հրաժարվել է հարկային մարմնի կողմից կազմված փաստաթղթերը ստանալուց, քանի որ սեփական ռիսկի հիման վրա դրսևորել է հարկ վճարողի համար անհետևողական վարքագիծ՝ մուտք չի գործել հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ, այն պարագայում, երբ հարկ վճարողն ի սկզբանե տեղյակ է եղել իր նկատմամբ իրականացվող հարկային ուսումնասիրության մասին: Ուստի իրավական ֆիկցիայի հիման վրա համարվում է, որ հայցվորը վարչական ակտը ստացել է, իսկ նման պայմաններում անբարենպաստ հետևանքները կրում է հայցվոր կողմը:

Այսպիսով, սույն գործի շրջանակներում լրացել է օրենքով նախատեսված վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը, որպիսի փաստը գործնականում ընդունել են և՛ հայցվորը, և՛ ստորադաս ատյանները, ուստի հաշվի առնելով, որ միջնորդությամբ չի ներկայացվել որևէ ծանրակշիռ փաստարկ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ,

միջնորդությունը ենթակա էր մերժման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Բացի այդ, սույն վարչական գործով Վերաքննիչ դատարանի արտահայտած դիրքորոշման ուժի մեջ մտնելու պարագայում կատեղծվի մի իրավիճակ, որում հարկային մարմնի կողմից կայացված վարչական ակտը չստանալու նպատակով կամ ստանալու պայմաններում նույնիսկ, տնտեսվարող սուբյեկտը կարող է մտածված կերպով մուտք չգործել հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի իր անձնական էջ, և վարչական ակտի անբողոքարկելի դառնալու պայմաններում, յուրաքանչյուր պահի այն վիճարկել դատական ատյաններում՝ հասնելով իր համար դրական արդյունքի: Նշված իրավիճակը գործնականում կարող է հանգեցնել անբարենպաստ դատական պրակտիկայի ձևավորման, ինչպես նաև արժեզրկել ՀՀ հարկային օրենսգրքի 68-րդ գլխով սահմանված հարկային ստուգումների ամփոփման կարգը՝ վերածելով այն ձևական բնույթի:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 28.08.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ հարկային օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ստուգման ակտի՝ հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով պարզաձև ծանուցման, ինչպես նաև տվյալ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հայցադիմումով ՀՀ վարչական դատարան դիմելու ժամկետների հաշվարկման առանձնահատկություններին՝ վերահաստատելով նաև նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և

պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) տեսանկյունից՝ դատարան դիմելու իրավունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների անբաժան մասն է (*տե՛ս, Zubac v. Croatia (ՄՊ), թիվ 40160/12 գանգադով Եվրոպական դատարանի 05.04.2018 թվականի վճիռը, կետ 76*):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*տե՛ս, Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգադով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*տե՛ս, Stubbings and others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետեր 51, 55*):

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու

դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*տե՛ս, Dumitru Gheorghe v. Romania գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով արձանագրել է, որ անձինք իրենց դատական պաշտպանության իրավունքից կարող են օգտվել օրենքով սահմանված ժամկետներում, և որպեսզի վարչական դատարանն իրավասու լինի գործադրելու օրենքով սահմանված իր լիազորությունները կոնկրետ իրավական վեճն ըստ էության լուծելու համար, անհրաժեշտ է երկու պայմանների միաժամանակյա առկայություն, առաջին՝ համապատասխան հայցի առկայություն, երկրորդ՝ հայցի ներկայացում վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Դատավարական ժամկետները բաց թողնելու դեպքում երկրորդ պայմանն ապահովված կարող է համարվել միայն կոնկրետ վարչական գործում բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման բավարարված միջնորդության առկայության դեպքում, իսկ մնացած դեպքերում անձը չի կարող օգտվել դատական պաշտպանության իրավունքից, իսկ ՀՀ վարչական դատարանն իրավասու չէ գործադրելու օրենքով վարչական դատարանի համար նախատեսված լիազորությունները (*տե՛ս, Քնարիկ Սարգսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/2242/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 09.09.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու, դատական պաշտպանություն հայցելու համար համապատասխան ժամկետների սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել իրավական որոշակիությունն ու անվտանգությունը: ՀՀ վարչական դատարանի մատչելիության իրավունքի իրավաչափ սահմանափակումներն օրենսդիրը սահմանել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում հայցադիմում ներկայացնելու համար որոշակի իրավական պահանջներ ու պայմաններ ամրագրելու միջոցով, որոնք վերաբերում են նաև հայցադիմումի ներկայացման ժամկետներին: Միաժամանակ սահմանված են հայցադիմումի ներկայացման ժամկետները չպահպանելու իրավական հետևանքները, որոնք դրսևորվում են դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու և հայցադիմումի ընդունումը մերժելու միջոցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Նույն օրենսգրքի 72-րդ հոդվածը սահմանում է ՀՀ վարչական դատարան դիմելու ժամկետները՝ ըստ հայցատեսակների: Վիճարկման հայցի համար նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է երկամսյա ժամկետ, որը հաշվարկվում է վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով ինչպես վկայակոչված իրավակարգավորումները, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի վերոգրյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության ու անվտանգության պաշտպանության համատեքստում դատական պաշտպանության իրավունքի արդարացի սահմանափակման եղանակներից մեկը ՀՀ վարչական դատարան դիմելու ժամկետային սահմանափակումն է: Օրենսդիրը որպես վարչական ակտի վիճարկման ժամկետի ելակետ ընդունել է տվյալ վարչական ակտը հասցեատիրոջը պատշաճ ծանուցելուն հաջորդող (տվյալ վարչական ակտի ուժի մեջ մտնելու) օրը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ քանի դեռ վարչական ակտի հասցեատերը պատշաճ կերպով չի ծանուցվել վարչական ակտի վերաբերյալ, ապա տվյալ ակտը չի կարող իրավական հետևանքներ ունենալ:

27.01.2015 թվականի թիվ ՍԴՌ-1189 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «(...) *շահագրգիռ սուբյեկտների կողմից (...) պատշաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության conditio sine qua non (պայման, առանց որի հնարավոր չէ) կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստիև ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն (...) սուբյեկտի (...)՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի (...) արդյունավետ ծանուցման (...) ընթացակարգ, որը գործնականում կբացատրի (...) շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները»:*

Եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի իրավական պաշտպանության միջոցներին, արձանագրել է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝ այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (*տե՛ս, Kilic v. Turkey թիվ 22492/93 գանգադով Եվրոպական դատարանի 28.03.2000 թվականի վճիռը, կետ 91, տե՛ս նաև, Iatridis v. Greece թիվ 31107/96 գանգադով Եվրոպական դատարանի 25.03.1999 թվականի վճիռը, կետ 66*):

Եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի իրավունքներին միջամտող որոշման ծանուցման հանգամանքին, նշել է, որ հայց ներկայացնելու կամ բողոք բերելու իրավունքը պետք է առկա լինի հենց այն պահից, երբ կողմերը կարող են տեղեկացված լինել իրենց նկատմամբ պարտականություններ սահմանող կամ իրենց օրինական իրավունքները կամ շահերը պոտենցիալ խախտող որոշման մասին (*տե՛ս, Miragall Escolano and Others v. Spain թիվ 55782/00 գանգադով Եվրոպական դատարանի 25.01.2000 թվականի վճիռը, կետ 37*):

Եվրոպական դատարանը նաև նշել է, որ իր դերն այսպիսի դեպքերում, այն է, որ որոշի, թե արդյոք դիմումատուները կարողացել են հույս դնել մի հետևողական համակարգի վրա, որն արդար հավասարակշռություն է հաստատում իշխանությունների և իրենց շահերի միջև: Եվրոպական դատարանը պետք է պարզի, թե արդյոք դիմումատուները հստակ, գործնական և արդյունավետ հնարավորություն ունեին

վիճարկելու համապատասխան վարչական ակտը (*տե՛ս, Lay Lay Company Limited v. Malta թիվ 30633/11 գանգադով Եվրոպական դատարանի 23.07.2013 թվականի վճիռը, կետ 56*):

Թեև Եվրոպական դատարանը նշել է, որ իր իրավասությունը չէ որոշել, թե ինչպես պետք է հրապարակվեն խնդրո առարկա ծանուցումները, վերը նշված սկզբունքներից բխում է, որ եթե բողոքարկվում է վարչական մարմնի այն որոշումը, որը կարող է ուղղակիորեն ազդեցություն ունենալ երրորդ անձանց վրա, ապա անհրաժեշտ է համակարգ, որը հնարավորություն կտա այդ անձանց ժամանակին տեղեկացվել նման որոշման մասին: Սա պահանջում է, որ որոշումը կամ դրա վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը հասանելի լինի նախապես որոշված և հրապարակված ձևով, որը հեշտությամբ հասանելի է բոլոր պոտենցիալ անմիջականորեն ազդեցության ենթարկվող անձանց: Նման հասանելիության համար բավարար երաշխիքների առկայության դեպքում, սկզբունքորեն պետության գնահատման սահմաններում է ընտրել բացառապես էլեկտրոնային միջոցներով հրապարակման համակարգը: Եվրոպական դատարանը նշել է նաև, որ, այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ այն որոշումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ անձանց վրա, և որոնց դեմ անձինք կարող են առարկել կամ բողոքարկել, բացառապես էլեկտրոնային միջոցներով հանրությանը ծանուցելու պրակտիկան սպառնում է այն քաղաքացիների չծանուցմանը, ովքեր չունեն մուտք դեպի ինտերնետ կամ ովքեր համակարգչային կիրառման տեսանկյունից անգրագետ են (*տե՛ս, Stichting Landgoed Steenberg and Others v. The Netherlands թիվ 19732/17 գանգադով Եվրոպական դատարանի 19.01.2021 թվականի վճիռը, կետեր 47, 52*):

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի՝ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի ծանուցման համակարգերի վերաբերյալ արտահայտած դիրքորոշումները, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրությամբ պետք է նախատեսված լինեն անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորող իրավակարգավորումներ, որի համար կարևորագույն պայման է անձի իրավունքներին և (կամ) օրինական շահերին առնչվող որոշման ընունմանն ուղղված վարույթի հարուցման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), միջամտող որոշման կամ պարտադիր ծանուցման ենթակա այլ փաստաթղթերի վերաբերյալ պատշաճ ծանուցված լինելը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ծանուցման համակարգի ընտրությունը բացառապես օրենսդրի գնահատման սահմաններում է, սակայն տվյալ հայեցողությունը բացարձակ չէ և սահմանափակված է բավարար երաշխիքների առկայության նախատեսման պահանջով: Մասնավորապես՝ որոշումը կամ դրա վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը պետք է հասանելի լինի նախապես սահմանված և հրապարակված այնպիսի ձևով, որը հեշտությամբ հասանելի լինի այն անձանց շրջանակին, ում իրավունքներին անմիջականորեն առնչվում է տվյալ որոշումը կամ դրա վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը:

Բացի այդ, պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի ծանուցման համակարգերը պետք է գործարկվեն այնպես, որ ծանուցման ենթակա որոշումը կամ դրա վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, մատչելի լինի նաև այն անձանց,

որոնք չունեն ինտերնետ հասանելիություն կամ բավարար հմտություններ համակարգչից օգտվելու համար:

Այսպես. համապատասխան փաստաթղթերի ծանուցման տարակերպ համակարգեր են նախատեսված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում և տարբեր հատուկ օրենքներում (այդ թվում նաև՝ ՀՀ հարկային օրենսգրքում):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի իրավակարգավորումների տրամաբանությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ իրականացվելու է որևէ վարչական վարույթ, այն իրականացնող վարչական մարմինը պետք է պարզի, թե արդյո՞ք գոյություն ունեն իրեն վերապահված լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարցերով իրականացվող վարչական վարույթը կարգավորող հատուկ օրենքներ, և, եթե այդպիսիք գոյություն ունեն, ապա պետք է որոշի, թե որքանո՞վ են հատուկ օրենքով կարգավորված իր կողմից իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները (*տե՛ս, «Բար» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/8136/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.08.2024 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային մարմնի կողմից հարկային պարտավորությունների գանձման վարչական վարույթի շրջանակներում ինչպես թղթային եղանակով, այնպես էլ էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունվող ՀՀ հարկային օրենսգրքով և օրենքով նախատեսված պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի, այդ թվում՝ որոշումների ծանուցման կարգը, ինչպես նաև այդ փաստաթղթերի ուժի մեջ մտնելու կարգը նախատեսվում են ՀՀ հարկային օրենսգրքով:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառության իմաստով՝ ստորև նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստն ու նշանակությունը. (...)

64) պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթեր՝ հարկային մարմնի կողմից Օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ չվճարված հարկային պարտավորությունների գանձման կամ հարկ վճարողի գույքի արգելանքի վարչական վարույթների շրջանակներում ինչպես թղթային եղանակով, այնպես էլ էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունվող՝ Օրենսգրքով և օրենքով նախատեսված փաստաթղթեր (արձանագրություններ, արգելանքի հանձնարարագրեր, որոշումներ, ծանուցագրեր), **ինչպես նաև հարկային ստուգումների և ուսումնասիրությունների շրջանակներում հարկային մարմնի կողմից կազմվող՝ Օրենսգրքով նախատեսված փաստաթղթեր (հանձնարարագրեր, ակտերի և արձանագրությունների նախագծեր, ակտեր, արձանագրություններ, որոշումներ, հրամաններ).**

66) հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցում՝ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրում, որը հավաստվում է էլեկտրոնային կառավարման համակարգի կողմից:

Օրենսգրքի 330-րդ հոդվածի համաձայն՝ հարկային և լիազոր մարմինների հսկողության շրջանակներում իրականացվող վարչական վարույթի նկատմամբ կիրառվում

են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված չեն վարչական վարույթի առանձնահատկություններ:

Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային ստուգումների դեպքում՝ ակտի (նախագծի)՝ այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը հարկ վճարողին ծանոթացման է ներկայացվում էլեկտրոնային ծանուցման եղանակով: Ակտը (նախագիծը) համարվում է հարկ վճարողին հանձնված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում նշված փաստաթղթերը տեղադրելու օրվանից: Նույն մասով սահմանված կարգով ակտը (նախագիծը) ուժի մեջ է մտնում հարկ վճարողին հանձնված համարվելու օրվան հաջորդող օրվանից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հարկային մարմնին վերապահել է Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ կետով նախատեսված պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերը (հարկային ստուգումների և ուսումնասիրությունների շրջանակներում հարկային մարմնի կողմից կազմվող՝ Օրենսգրքով նախատեսված փաստաթղթեր՝ հանձնարարագրեր, ակտերի և արձանագրությունների նախագծեր, ակտեր, արձանագրություններ, որոշումներ, հրամաններ) հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով ծանուցելու իրավասություն: Մասնավորապես՝ Օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով հստակ արձանագրվել է, որ հարկային ստուգումների դեպքում՝ ակտի (նախագծի)՝ այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը հարկ վճարողին ծանոթացման է ներկայացվում էլեկտրոնային ծանուցման եղանակով: Ակտը (նախագիծը) համարվում է հարկ վճարողին հանձնված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում նշված փաստաթղթերը տեղադրելու օրվանից, և ակտը (նախագիծը) ուժի մեջ է մտնում հարկ վճարողին հանձնված համարվելու օրվան հաջորդող օրվանից:

«Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով, անդրադառնալով պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու միջոցով հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով իրազեկելու կարգավորումներին, արձանագրել է հետևյալը.

պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի՝ հարկ վճարողներին էլեկտրոնային եղանակով իրազեկումը հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու միջոցով, որը հավաստվում է էլեկտրոնային կառավարման համակարգի կողմից, կարող է համարվել անձի՝ պատշաճ ծանուցման եղանակ, քանի որ հարկ վճարող սուբյեկտները (անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք) և հարկային գործակալները համապատասխան ոլորտում մասնագիտացված գործունեություն իրականացնող պրոֆեսիոնալ սուբյեկտներ են, որոնք, օգտվելով հարկ վճարողի անձնական էջից,

ներկայացնում են հաշվետվություններ հարկային մարմին: Բացի այդ, ծանուցման տվյալ եղանակը համապատասխանում է Եվրոպական դատարանի սահմանած չափանիշներին, քանի որ առնվազն նախապես հրապարակված եղանակով է իրականացվում ծանուցումը, ինչպես նաև վերոնշյալ անձանց՝ մասնագիտացված գործունեություն իրականացնող պրոֆեսիոնալ սուբյեկտներ լինելու հանգամանքը բացառում է պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթի մասին նրանց չիրազեկվելու հանգամանքը՝ պայմանավորված համացանցին անհասանելիությամբ կամ համակարգչային կիրառման տեսանկյունից անգրագիտությամբ:

Այսպիսով, պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի ծանուցումը կարող է իրականացվել հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի հարկ վճարողի անձնական էջում տեղադրելու միջոցով, որը հավաստվում է էլեկտրոնային կառավարման համակարգի կողմից, որին հաջորդող օրն էլ համապատասխան փաստաթուղթը համարվում է ուժի մեջ մտած:

Վերոգրյալի հիման վրա՝ անդրադառնալով դատարան վիճարկման հայց ներկայացնելու ժամկետներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի հաշվարկման ելակետը տվյալ գործերով համարվում է վարչական ակտի ուժի մեջ մտնելու, այն է՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի՝ հարկ վճարողի անձնական էջում տեղադրելուն հաջորդող օրը, որը հավաստվում է էլեկտրոնային կառավարման համակարգի կողմից, որից էլ հաշվարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ժամկետի հոսքը (*տե՛ս, «Բար» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/8136/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.08.2024 թվականի որոշումը*):

Այսպիսով, վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հստակ կարգավորման է ենթարկել հարկային ստուգումների դեպքում ակտի (նախագծի) վավերացված կամ տեսաներածված տարբերակը հարկ վճարողին ծանոթացման ներկայացնելու կարգը, այն է՝ սահմանելով էլեկտրոնային ծանուցման եղանակը: Ուստի, ստուգման ակտը (նախագիծը) համարվում է հարկ վճարողին հանձնված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում նշված փաստաթղթերը տեղադրելու օրվանից և ուժի մեջ է մտնում հարկ վճարողին հանձնված համարվելու օրվան հաջորդող օրվանից: Նման պայմաններում վիճարկման հայց ներկայացնելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ժամկետի հոսքը սկսում է վարչական ակտի ուժի մեջ մտնելու, այն է՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի՝ հարկ վճարողի անձնական էջում տեղադրելուն հաջորդող օրը, որը հավաստվում է էլեկտրոնային կառավարման համակարգի կողմից:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործը հարուցվել է անհատ ձեռնարկատեր Հակոբ Մադոյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է ամբողջությամբ անվավեր ճանաչել Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտը: Միաժամանակ հայցվորը ներկայացրել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարանը 02.05.2024 թվականին կայացրել է «Հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը գրավոր ընթացակարգով քննելու մասին» որոշում, որով արձանագրել է նաև հետևյալը. «ինչ վերաբերում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությանը, ապա (...) այն քննարկման ենթակա չէ, քանզի ըստ ներկայացված միջնորդության հայցվորի կողմից դատավարական ժամկետ բաց չի թողնվել» **(հավելվածի գ. թ. 23-24):**

ՀՀ վարչական դատարանում 17.06.2024 թվականին մուտքագրվել է Կոմիտեի միջնորդությունը՝ վարչական գործի վարույթը կարճելու վերաբերյալ՝ այն հիմնավորումներով, որ Կոմիտեն 11.01.2024 թվականին կայացրել է թիվ 4184772 ակտը, որը նույն օրը, ժամը 11:45-ին տեղադրվել է հարկ վճարողի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի անձնական էջում, որպիսի պայմաններում հայցվորը սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտն օրենքով սահմանված կարգով ստացել է, ուստի հայցը ներկայացրել է սահմանված երկամսյա ժամկետի խախտմամբ **(հավելվածի գ. թ. 32-35):**

Դատարանը 20.06.2024 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «հայցվորը Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտը բողոքարկելու մասով բաց է թողել վիճարկման հայց հարուցելու երկամսյա ժամկետը, քանի որ հայցադիմումը ներկայացվել է 25.04.2024 թվականին, մինչդեռ վիճարկվող վարչական ակտը ուժի մեջ է մտել 12.01.2024 թվականին, հետևաբար Հայցվորի կողմից խախտվել է վարչական ակտի վիճարկման երկամսյա ժամկետը: (...): (...) վարչական վարույթի նյութերից երևում է, որ վիճարկվող վարչական ակտը և դրա կայացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը թղթային տարբերակով Հայցվորին չեն ուղարկվել: Թեև վիճարկվող վարչական ակտը ՀՀ հարկային օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի համաձայն հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում տեղադրվելու միջոցով համարվում է Հայցվորին հանձնված, սակայն Հայցվորը նշված վարչական ակտին և դրա կայացման համար հիմք հանդիսացած փաստաթղթերին ամբողջությամբ ծանոթանալու հնարավորություն ձեռք է բերել միայն իր դիմումի հիման վրա 18.04.2024 թվականին դրանք ստանալուց հետո: Դատարանի գնահատմամբ վարչական ակտի ուժի մեջ մտած լինելու հանգամանքը դեռևս չի հիմնավորում վարչական ակտի հասցեատիրոջ

կողմից դրա մասին փաստացի իրազեկված լինելու հանգամանքը, իսկ վարչական ակտը և դրա կազմման համար հիմք հանդիսացող վարույթի նյութերն անհրաժեշտ են արդյունավետ դատական պաշտպանությունը կազմակերպելու համար: (...) վիճարկվող վարչական ակտը և նշված փաստաթղթերը ստանալուց հետո Հայցվորը միջոցներ է ձեռնարկել իր դատական պաշտպանության իրավունքը իրականացնելու ուղղությամբ և 25.04.2024 թվականին Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտի դեմ ներկայացրել է վիճարկման հայց: Այսինքն՝ Հայցվորը, փաստացի ստանալով վիճարկվող վարչական ակտը, ակտիվ գործողություններ է իրականացրել 11.01.2024 թվականի թիվ 4184772 ակտը վիճարկելու համար, նրա կողմից չի ցուցաբերվել անգործություն»:

Վերաքննիչ դատարանը 28.08.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 20.06.2024 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը թողել է անփոփոխ՝ այն պատճառաբանությամբ, որ «(...) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտը Հայցվորին է հանձնվել միայն 18.04.2024 թվականին, ինչպիսի փաստը հաստատվում է գործում առկա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ Ե-59025-2024 գրությամբ, այսինքն՝ երկամսյա ժամկետի հաշվարկը հոսել է 2024 թվականի ապրիլի 19-ից, իսկ հայցադիմումն առձեռն Դատարան է ներկայացվել 2024 թվականի ապրիլի 25-ին, հետևաբար Վերաքննիչ դատարանը գալիս է հետևության, որ Հայցվորը չի ցուցաբերել անգործություն և ձեռնարկել է միջոցներ՝ իր իրավունքների արդյունավետ պաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ, և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտը վիճարկելու նպատակով Հայցվորը դատական պաշտպանության է դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետի պահպանմամբ, ուստի Դատարանը, կայացնելով վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին որոշում, կայացրել է ճիշտ դատական ակտ»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությունների հիմնավորվածությանը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչությունը 11.01.2024 թվականին կայացրել է թիվ 4184772 ստուգման ակտը (**հավելվածի գ. թ. 48-52**):

Ստուգման ակտն անհատ ձեռնարկատեր Հակոբ Մադոյանին է ներկայացվել հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջի միջոցով: Գործում առկա «Փաստաթղթերը հարկ վճարողի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի անձնական էջում տեղադրված լինելու

վերաբերյալ հավաստում» վերտառությամբ փաստաթղթի ուսումնասիրությունից պարզվել է, որ վիճարկվող 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտը հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի՝ հայցվորի անձնական էջում տեղադրվել է 11.01.2024 թվականին, ժամը 11:45-ին (**հավելվածի գ. թ. 53**):

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտն ուժի մեջ է մտել 12.01.2024 թվականին, որպիսի պայմաններում վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից սկսած մինչև 13.03.2024 թվականը՝ երկամսյա ժամկետի պահպանմամբ, անհատ ձեռնարկատեր Հակոբ Մադոյանը կարող էր դիմել ՀՀ վարչական դատարան Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով, այնինչ անհատ ձեռնարկատեր Հակոբ Մադոյանը հայցը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել 25.04.2024 թվականին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, բավարարելով բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով այդ որոշումը, սխալ եզրահանգում են կատարել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բավարարման ենթակա լինելու հիմքի առկայության վերաբերյալ՝ թույլ տալով ՀՀ հարկային օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի խախտում:

Այսպես. Վերաքննիչ դատարանը որպես երկամսյա ժամկետի հաշվարկի հոսքի սկիզբ հիմք է ընդունել 19.04.2024 թվականը և արձանագրելով, որ հայցադիմումն առձեռն Դատարան է ներկայացվել 25.04.2024 թվականին, եզրահանգում է արել այն մասին, որ Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտը վիճարկելու նպատակով հայցվորը դատական պաշտպանության է դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետի պահպանմամբ: Նախ՝ եթե ըստ Վերաքննիչ դատարանի՝ հայցվորը վիճարկման հայցը ներկայացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետի պահպանմամբ, ապա առնվազն անտրամաբանական է, թե ինչպես է հարգելի համարվում մի ժամկետ, որը բաց չի թողնվել: Երկրորդ՝ վիճարկման հայցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետի պահպանմամբ ներկայացված լինելու իր եզրահանգումը Վերաքննիչ դատարանը պայմանավորել է այն փաստարկով, որ ըստ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ Ե-59025-2024 գրության՝ Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 11.01.2024 թվականի թիվ 4184772 ստուգման ակտը հայցվորին է հանձնվել միայն 18.04.2024 թվականին՝ անտեսելով ՀՀ հարկային օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի իրավակարգավորումը:

Այսինքն՝ ստորադաս դատարանները բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը քննարկել և որոշում են կայացրել վիճարկվող վարչական ակտը

հայցվորի կողմից ստացված լինելու և ըստ այդմ՝ ուժի մեջ մտնելու օրերի վերաբերյալ սխալ ելակետ հիմք ընդունելու արդյունքում՝ հաշվի չառնելով նշված հարցի առնչությամբ օրենսդրական հստակ կարգավորումը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է Վերաքննիչ դատարանի դատական ակտը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ վճռաբեկ բողոքը բավարարելու, ստորադաս դատարանի միջանկյալ դատական ակտը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 28.08.2024 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը վերացնել և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 20.06.2024 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Ձեկուցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ